ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Թիվ 02 -- 28
04.02. 2020թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Հ.Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2020թվականի հունվարի 29–ի հերթական թիվ 1 նիստի որոշումը :

Առդիր 7 էջ

Նորապատ համայնքի ղեկավար՝ Վ.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

---

# ՈՐՈՇՈՒՄ

**29**.հունվարի **2020** թվական

Թիվ **1** նիստի
N 1

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Նորապատ համայնքի ավագանին՝

## ՈՐՈՇԵՑ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ **1** հերթական նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա.Առաքելյան | | | |
| Կ.Ղազարյան | | | |
| Ք.Թաղևոսյան | | | |
| Ա.Սիմոնյան | | | |
| Ա.Սողոմոնյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Վ.Խաչատրյան

2020թ հունվարի 29

Գ.Նորապատ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նորապատ
Համայնքի ավագանու
2020թվականի հունվարի 29-ի
թիվ 1 հերթական նիստի
N 1 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1.Օրակարգի հաստատում

Վ.Խաչատրյան /Համայնքի ղեկավար/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 27-ի թիվ 10 հերթական նիստի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Վ.Խաչատրյան /Համայնքի ղեկավար/

Աշխատակազմի քարտուղար՝ Մ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

29.հունվարի 2020 թվական

Թիվ 1 նիստի

N 2 – Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 2 _Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ ենթակետով , <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով,34-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27 -ի N 2-Ն որոշման , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի 2020 թվականի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)բաժին 41 խումբ 10 դաս 00 համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ միջոցների պլանի ներմուծում -3573440,8 դրամի չափով
2)բաժին 81 խումբ 01 դաս 00 համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ միջոցների պլանի ներմուծում – 3062627,07 դրամի չափով
3)բաժին 41 խումբ 09 դաս 00 համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ միջոցների պլանի ներմուծում – 704246,3 դրամի չափով
4) բաժին 01 խումբ 01 դաս 01 Նորապատ համայնքի աշխատակազմի 5112 ծախսային հոդվածում պլանի ներմուծում -3766873,37 դրամի չափով
5)բաժին 06 խումբ 04 դաս 01 փողոցների լուսավորում նախորդ տարի 4212 ծախսային հոդվածում պլանի ներմուծում 340645,73 դրամի չափով
6) բաժին 08 խումբ 02 դաս 0 3 Նորապատ համայնքի մշակույթի տան նախորդ տարի 4212 ծախսային հոդվածի պլանի ներմուծում 70168 դրամի չափով
7)բաժին 10 խումբ 07 դաս 01 նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին (նախորդ տարի ) 4819 ծախսային հոդվածի պլանի ներմուծում 100000 դրամի չափով
8)վարչական բյուջեի 3062627,07 դրամի փոխանցում ֆոնդային բյուջե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա.Առաքելյան | [signature] | ____________ | ____________ |
| Կ.Ղազարյան | [signature] | ____________ | ____________ |
| Ք.Թադևոսյան | [signature] | ____________ | ____________ |
| Ա.Սիմոնյան | [signature] | ____________ | ____________ |
| Ա.Սողոմոնյան | [signature] | ____________ | ____________ |

Համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյան

2020թ հունվարի 29
Գ.Նորապատ

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ N2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

| հ/հ | Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ արդարադատության նախարարության | <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 27-ի թիվ 10 հերթական նիստի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> որոշման նախագծի վերնագրից և 1-ին կետից անհրաժեշտ է հանել <<թիվ 10 հերթական նիստի>> բառերը. | Ընդունվել է : | Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| 2. | ՀՀ արդարադատության նախարարության | <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 27-ի թիվ 10 հերթական նիստի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> որոշման նախագծի նախաբանն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ մասնավորապես՝անհրաժեշտ է հղում կատարել<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի համապատասխան հոդվածներին, քանի որ <<Իրավական ակտերի մասին >> օրենքը 2018 թվականի ապրիլի 9-ից ուժը կորցրած է ճանաչվել: | Ընդունվել է : | Կատարվել է համապատասխան փոփոխություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | ՀՀ արդարադատության նախարարության | 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ մասնավորապես ՝նշել փոփոխվող իրավական ակտի լրիվ անվանումը՝նկատի ունենալով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները. | Ընդունվել է : | Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| 4. | ՀՀ արդարադատության նախարարության | 2-րդ կետում <<հրապարակման>> բառից հետո անհրաժեշտ է լրացնել <<օրվան>> բառը՝ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 23-րդ հոդվածի պահաջները: | Ընդունվել է: | Կատարվել է համապատասխան փոփոխություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ՝ press@moj.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՆՈՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հունվարի 20-ի թիվ 02-14 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 10 հերթական նիստի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝
Կ. ԽՏՐՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապաս համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապաս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 10 հերթական նիստի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապաս համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապաս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 10 հերթական նիստի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի՝

1/ վերնագրից և 1-ին կետից անհրաժեշտ է հանել «թիվ 10 հերթական նիստի» բառերը.

2/ նախաբանն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել, մասնավորապես՝ անհրաժեշտ է հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համապատասխան հոդվածներին, քանի որ «Իրավական ակտերի մասին» օրենքը 2018 թվականի ապրիլի 9-ից ուժը կորցրած է ճանաչվել.

3/ 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ մասնավորապես՝ նշել փոփոխվող իրավական ակտի լրիվ անվանումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները.

4/ 2-րդ կետում «հրապարակման» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «օրվան» բառը՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալություն